

Σελήνη ημερολόγιος

9(47-925)

Σ - 28

Φεβρου
1914

1914 № 2097

«ՀԱՆՐԱՊԵՏ»-ի ժողովրդ. գրադ. № 2

Պատմական բաժին № 1

ՀԱՅՈՑ

ՊԱՏԱՌԻԹԻՆԵՐ

Նախադատմական շրջան.

Հիմնականում «ՀԱՆՐԱՊԵՏ»-ի
բաժնից հանդիսանում է:

Армянская история

Доисторическ. эпоха

БАКУ

Томская газета „Баку“

914.

8(47.925)

2-28

9 (47 325)

2-28

49

«ՇԱԽԻՂ»-ի ժողովրդ. գրադ. № 2

Պատմական բաժին № 1

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախապատմական շրջան.

Զեյի լուսերած «ՇԱԽԻՂ»-ի
բաժնագրերին:

Армянская история

Дописторическ. эпоха

БАКУ

Типография газеты „Баку“

1914.



36190-66

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախապատմական շրջան

Մարդկային ցեղերի քաղաքակրթութիւնը՝ ուսում, գիտութիւններ և արհեստներ միանգամից չեն առաջ եկել, այլ երկար դարերի ընթացքում, երկարատև և յամառ աշխատանքի շնորհիւ։ Քաղաքակրթութիւնն արագ կերպով սկսել է զարգանալ այն ժամանակ, երբ մարդիկ ընտելացել են նստակեաց կեանքին, այսինքն՝ երբ նրանք բացի որսորդութիւնից և խաշնարածութիւնից

120 0 1

945-շահ
50708-4.հ. 8

սկսել են պարապել երկրագործութեամբ և արհեստներով: Ի հարկէ, այն մարդիկ, որոնք վարուցանքով են պարապում ու իրանց ապրուստը դրանով ձեռք բերում, չեն կարող իրանց արտերը վարած, կամ կանաչած թողնել ու հեռանալ ուրիշ վայրեր. նրանք պէտք է սպասեն, որպէս զի հնձեն, կալ կասեն, երկիրը նորից մշակեն ու պարտացեն և այդպէս շարունակ. այդպիսի աշխատանքը մարդկանց ստիպել է ունենալ հաստատուն բնակարաններ, ուրեմն առաջ է եկել շինարարական արհեստը. իրանց գործը հեշտացնելու համար պէտք է մտածէին յարմար գործիքներ հնարելու, որի հա-

մար պէտք է առաջ գալին ու զարգանային մի քանի արհեստներ՝ դարբնութիւն, հիւսնութիւն և այլն:

Այսպիսով երկրագործութիւնը մեծ չափով նպաստեց մարդկանց մէջ քաղաքակրթութեան երևան գալուն: Իսկ մենք գիտենք, որ մարդիկ շատ հին դարերում վայրենի դրութեան մէջ էին, ապրում էին որսորդութեամբ, ինչպէս իրենց շրջապատող զազանները: Այժմ էլ ատ տեղերում զեռ կան միմիայն որսորդութեամբ ապրող վայրենիներ ու կիսավայրենի խաշնարած թափառականներ. նրանց մէջ քաղաքակրթութիւն կամ բոլորովին բացակայում է, կամ շատ ստոր աստիճանի վրայ է նա:

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախադասական շրջան

Մարդկային ցեղերի քաղաքա-
կրթութիւնը ուսում, գիտութիւն-
ներ և արհեստներ միանգամից
չեն առաջ եկել, այլ երկար դա-
րերի ընթացքում, երկարատե և
յամառ աշխատանքի շնորհիւ:
Քաղաքակրթութիւնն արագ կեր-
պով սկսել է զարգանալ այն ժա-
մանակ, երբ մարդիկ ընտելացել
են նստակեաց կեանքին, այսին-
քով՝ երբ նրանք բացի որսորդու-
թիւնից և խաշնարածութիւնից



36190-66

120 0 1

945-202
50708-4.6. 8

Այդ պատճառով ամենահին քաղաքակրթութիւնը երևան է եկել ու զարգացել այն երկրներում, որոնք յարմար էին երկրագործութեան համար: Այդ երկրներից մէկը Այրարատեան դաշտն է, Արաքսի հովիտը, որ այժմ կազմում է Երևանի նահանգը: Դա մի ընդարձակ դաշտ է, որի կենտրոնում փառահեղօրէն բարձրանում են Մեծ ու Փոքր Մասիս կամ Արարատ գագաթները: Մեծ Արարատը այնքան բարձր է, որ նրա գագաթի ձիւնը ամառ-ձմեռ չէ հալչում: Շատ սիրուն տեսք ունի նա, ամենահեռու տեղից նկատելի է, երբ ամառը, պարզ եղանակին արեւը թեքւում է դէպի իր մուտքը և վերջին ճառա-

գայթնները տարածւում են նրա ձիւնածածկ գագաթի վրայ, կարծես անզին քարեր են պսպղում. իսկ երբ սև ամպերն են կուտակւում, կայծակն է ճայթում ու ակօսում նրա գագաթի շուրջը, այն ժամանակ զարհուրելի է:

Շատ հեռաւնակ ցեղեր ամենահին զարերից գիտէին Մասիս սարի «Արարատ» անուն մասին. «Արարատ» անունը յիշւում է նրանց մի աւանդութեան մէջ՝ թէ ինչպէս ջրհեղեղից յետոյ Նոյի տապանը իջել է նրա վրայ. այդ պատճառով նրա շուրջը տարածւած երկիրն էլ նրա անունով կոչւում էին Ուրարտու կամ Արարատեան երկիր:

Արաքսը ոտոգում է այդ եր-

կիրը մի ծայրից մինչև միւսը.
 երբ նա յորդանում է, ավերից
 դուրս է գալիս, իր ջրերի հետ
 պարարտ տիղմ է սփռում երկրի
 վրայ, որը շատ յարմար է երկ-
 րագործութեան համար. հողը
 փխրուն է, և նա շարունակ իր
 ընթացքը այս ու այն կողմն է
 ծռում: Մի ժամանակ՝ Քրիստոս-
 սից շատ առաջ, նա առանձին
 էր թափում կասպից ծովի մէջ.
 իսկ այժմ, ինչպէս գիտենք, նա
 մօտեցել է Կուրին ու խառնում
 է նրա հետ: Արսաքսն է իր ջրե-
 րով ու իր վտակներով շուր տա-
 լիս, ծարաւը յագեցնում Արա-
 րատեան երկրին. դրա համար
 է, որ նրան էլ տւել են «Մայր-
 Արաքս» անունը:

Արաքսի հովիտը կամ Արա-
 րատեան երկիրը Ասիայի ամե-
 նահեռաւոր անկիւններից մէկն
 է. դրա համար ամենահին դա-
 րերում բոլոր հալածած ցեղերը,
 ազատութիւն որոնողները ապաս-
 տանում էին այդտեղ: Իսկ մենք
 գիտենք՝ հաղարաւոր տարիներ
 առաջ մարդիկ ինչպիսի բարբա-
 րոսութիւններ էին գործում. ով
 ուժեղ էր, իրաւունքը նրանն էր:
 Եւ այն ցեղերը, որոնք չցանկա-
 ցան ուժեղների ստրուկը լինել
 փախան այդ հեռաւոր անկիւնը
 իրանց առաջնորդների՝ նահա-
 պետների հետ և բնակութիւն
 հաստատեցին Արաքսի կամ նրա
 ճիւղերի ավերին: Այդպիսով հե-
 տըզհետէ կազմեցին փոքրիկ գա-

ւառներ իրանց զլիաւորներով.
այդ գաւառները հնում կոչւում
էին և «հովիտներ»:

Պա այն ժամանակն էր, երբ
մարդիկ մետաղէ գործիքներ չու-
նէին. նրանք իրանց գործիքները
պատրաստում էին ամուր քա-
րից: Այդ շրջանը պատմութեան
մէջ կոչւում է Քարէ դար: Այժմ
էլ Կողբի աղահանքը փորելիս
գտնում են այդ քարէ գործիք-
ներին:

Ինչ մարդիկ էին եկողները,
որ ցեղին էին պատկանում, ինչ
լեզուով էին խօսում—ոչ ոք չգի-
տէ, նրանք ապրում էին Քրիստո-
սից հազարաւոր տարիներ առաջ:
Վերջին ժամանակներս գտնւել են
նրանց «Բրոնզէ» դարին ֆնացած

յիշատակները. նրանք իրանց
մեռելները թաղում էին զէնք
ու զրահով, երբեմն տնային իրե-
ղէններով ու ձիու սարքով ու
նրանց վրայ բարձր հողաթումբ
էին կանգնեցնում. այդ զերեզ-
մաններից հանւում են նրանց
զէնքերն ու այլ իրեղէններ: Նը-
րանց թաղաւորները սովորու-
թիւն ունէին որեւէ մղած պատե-
րազմի, տիրած երկրի ու քաղա-
քի, անցկացրած ջրանցքների
մասին քարէ արձանների վրայ
գրել: Նրանց գրերը մեխերի
նման էին, որոնք կոչւում են
բեկազրեր. այդպիսի արձանա-
գրութիւններ շատ են գտնւած:
Գիտնականները կարողացել են
այդ գրերի գաղտնիքն իմանալ

դ կարգալ: Այնուհետև հարեան
ազգերը, որոնք գործ են ունեցել
այդ ժողովրդի հետ, իրանց գը-
րութիւնների մէջ յիշատակում
են նրանց մասին: Ահա այդ բո-
լորից կազմել են Արարտեան
երկրի կամ, ինչպէս հնում կոչ-
ւում էր, Ուրարտւի ամենահին
պատմութիւնը:

Այն ցեղերը, որոնք անյիշելի
ժամանակներից 'ի վեր ապրում
էին Արարատի շուրջը տարած-
ւած երկրում, ընդհանուր անու-
նով կոչւում էին Ուրարտ ցիւներ
կամ թաւրեր: Թաւրեր կամ հալ-
դեր կոչւում էին իրենց ա-
մենահին թաւրի (Հայկ) նախա-
հօր անունով, որին յետոյ աստ-
ւածացրին:

Նրանք բարձրահասակ էին,
ուժեղ, ծանր, զիմացկուն, կուր
ու աշխատանքի մէջ դաժան,
խիստ բնաւորութեամբ և իրանց
անկախութիւնը թանկ գնահա-
տող: Նրանց մի մասը պարապում
էր երկրագործութեամբ և ընդ-
հանրապէս երկրի մշակութեամբ,
իսկ միւս մասը՝ որսորդութեամբ
և խաչնարածութեամբ:

Նրանք ջրանցքներ էին փո-
րում ու հեռու տեղերից ջուր էին
տանում՝ իրանց արտերը ջրելու:
Եթէ արտերը լեռների լանջերին
էին տարածւած, հեղեղներից
պաշտպանելու համար միահա-
մուռ ուժերով պատնէշներ էին
կանգնեցնում. առհասարակ խրմ-
բերով՝ համայնական աշխատանք
նրանց մէջ նկատելի էր:

Նալդերն ապրում էին փոքրիկ գիւղաքաղաքներում՝ աւաններում, որոնց շուրջը քարէ չոր պատերով ամրացնում էին, կամ թէ հեշտ պաշտպանելու համար շինում էին բարձրութիւնների վրայ։

Մեծամեծ քարեր դարսում էին իրար վրայ ու այդպիսով գոյանում էր պատ։ Պարիսպների անկիւններում կանգնեցնում էին քառանկիւնի բարձր աշտարակներ։ Տները տուփերի փոքրիկ արկղերների ձև ունէին. գոները ցածր էին, իսկ առջևից ունենում էին սրահ։ Տան կտուրը երկու թեքւածքից էր լինում բաղկացած, որպէսզի անձրևի և ձիւնի ջուրը չկանգնէ։

Նրանց գլխաւորների՝ իշխանների տներն աւելի ընդարձակ էր, երբեմն սիւնազարդ. իսկ սիւները դարգարում էին զանազան քանդակներով։

Նալդերի մի մասն ապրում էին ծառերի վրայ. դրանք կերակրւում էին ծառերի պտուղներով ու որսի մսով։ Նրանք ծառերի նիւթից պատրաստում էին մի տեսակ արբեցնող խմամիչք։ Նրբ թշնամուն տեսնում էին, երզում ու պարում էին և իրանց բարձր աշտարակներից նրանց վրայ էին նետում (խոյանում)։

Նրանք պաշտում էին բնութեան երևոյթներ և զանազան կուռքեր, որոնց զոհ էին մատու-

ցանում: Գլխավոր աստուածն էր՝
Խալդեի կամ Հալդեի, որը համար-
ւում էր երկրի տէրը. ամբողջ
ազգն էլ նրա անունով կոչւում
էր «ազնիւ խալդիացիներ»: Օղի
և կայծակի աստուածը կոչւում
էր Թէխսպաս և արեգակինը՝ Ար-
դինիս:

Խալդեերն ապրում էին մանր
ցեղերով՝ իրարից անկախ. ամեն
մէկն ունէր իր նահապետը, որ
Թագաւոր էր կոչւում. այնպէս
որ այդ երկիրը լիքն էր բազմա-
թիւ մեծ ու փոքր Թագաւորնե-
րով:

Բայց Քրիստոսից 2000 տարի ա-
ռաջ խալդական այդ մանր Թագա-
ւորութիւնների մէջ մի խլրտում ու
անհանգստութիւն է ընկնում.

պատճառը նրանց հարաւային հա-
րեան Ասորեստանն էր, որ տա-
րածւում էր Նիբատի ու Տիգրի-
սի հովիտներում: Այդ երկրի
Թագաւորները ուղղակի դադան
մարդիկ էին. նրանք սիրում էին
հեռաւոր տեղերից ամբողջ ազ-
գեր քոչացնել, բերել իրանց
երկիրը, որպէսզի իբրեւ ստրուկ-
ներ կամ դաշտերը մշակեն, կամ
իրանց համար փառահեղ պա-
լատներ ու քաղաքներ և մեծա-
մեծ ջրանցքներ կառուցանեն:
Եթէ այդ դժբաղդները զիմա-
դրում էին, այն ժամանակ Ասո-
րեստանի բարբարոս Թագաւոր-
ները նրանց ջարդում էին մինչև
վերջին մարդը: Նրանց բարբա-
րոսութեան սարսափները տա-

36190-66



բաժնել էր շատ հեռու. այդ սար-
սափների լուրը հասել էր և խալ-
դերին: Այդ վտանգի առաջ խալ-
դերի մանր թագաւորութիւն-
ները ցանկացան միանալ և ի-
րանց հակառակորդի նման մի
թագաւորի հպատակել, որպէս-
զի հեշտ լինի դիմադրելը: Այդ-
պիսով առաջ եկաւ մի դաշնակ-
ցութիւն այդ թագաւորութիւն-
ների մէջ: Ամեն մի փոքրիկ գա-
ւառ դարձեալ ունէր իր առան-
ձին թագաւորը, բայց բոլորի նա-
խագահը կամ առաջնորդը հա-
մարում էր բուն Արարատեան
երկրի՝ Ուրարուի թագաւորը:

Քրիստոսից առաջ, իններորդ
դարից սկսած սկսում է մի եր-
կարատե պատերազմ Ասորես-

տանի և Ուրարուի մէջ: Այդ
պատերազմների նկարագրութիւն-
ները արձանագրւած են Վան
քաղաքի մօտ բարձրացող ժայռի
վրայ: Այնտեղ խալդ թագաւոր-
ների հերոսութիւններն են նկա-
րագրւած:

Նրանց զէնքերն էին՝ նետ—
աղեղ, կեռ թրեր, պարսատիկ,
վահան և նիզակ. նրանք իրանց
մարմնի վրայ հագնում էին
զրահ:

Այդ պատերազմների շնորհիւ
մի կողմից ամենամեծ չափերի
է հասնում խալդերի պատերազ-
մական ոգին, նրանց կորովը,
միւս կողմից աւելի և աւելի ա-
ռաջ է գնում քաղաքակրթու-
թիւնը:

Որմնադրութեան արհեստն է
զարգանում: Ուրարդւի թագա-
ւորներն իրանց երկիրը զարդա-
րում են պարսպապատ քաղաք-
ներով ու բերդերով. 'ի միջի այ-
լոց նրանցից է մնացել Վան քա-
ղաքն ու բերդը. զարգանում է
գիրը. սկսում են պղնձէ ու ա-
նագապղնձէ (բրոնզէ) իրեր ու
զանազան զէնքեր պատրաստել.
պարտիզպանութիւնն է առաջ
գալիս, նրա հետ միասին և գինի
պատրաստելու արհեստը: Առաջ
են գալիս ու զարգանում դա-
նազան գիտութիւններ, օր. բը-
ժըշկութիւն, աստղաբաշխութիւն,
կրօն և պատմութիւն. բժշկու-
թեան համար նրանք գործ էին
ածում սպեղանի, բոյսերից և

արմատներից պատրաստած խը-
միչքներ և ջերմուկներ (հա-
քային ջրեր): Քարէ տախտակ-
ների վրայ փորագրում էին աստ-
ղերի շարժումը՝ տարւայ եղա-
նակներն ու ժամանակը որոշե-
լու համար: Կրօն և պատմու-
թիւն ասելով նրանք հասկանում
էին աշխարհի սկզբնաւորութեան
և ջրհեղեղի աւանդութիւնը և
նրանց շարունակութիւնը կազ-
մող իրանց աստուածների ու դիւ-
ցազունների մասին գովասանք-
ները:

Նրանց թագաւորներից աչքի
ընկան քաջ Արամէն, որ միաց-
րեց խալդական բոլոր մանր
թագաւորներին իր իշխանու-
թեան տակ. Իսպուլինիսն ու Մեն-

ւասը, որոնք իրանց երկիրը ընդարձակեցին ու կարգ—կանոն մտցրին, անվեհեր Արգիշտիշը, որ 14 ճակատամարտերում բոլորովին ջախջախեց հզօր Ասորեստանի ոյժը և նրանից խլեց առաջնութեան իրաւունքը:

Նրանց հերոսութիւնները բերանէ բերան պատմում էին և պահպանեցին երկար ժամանակ, նոյնիսկ Բրիտանեութեան շրջանում: Այդ աւանդութիւններին մի քանիսը մեզ հաղորդում է Մովսէս Խորենացին. դրանք՝ են Հայկի ու Բէլի, Արամի ու Նրա յաջորդների մասին աւանդութիւնները:

Սակայն այդ պատերազմները, որոնք տեւեցին 200 տարի, իրանց փաստակար կողմն էլ ունեցան.

երկիրը տնտեսապէս քայքայեց, ժողովուրդը վայրենացաւ ու ուժասպառ եղաւ և թէև իր ախոյեան Ասորեստանն էլ նոյն քայքայած դրութեան էր հասել, սակայն նորանոր աւելի թարմ ցեղեր Ասիայի խորքերից կամաց-կամաց առաջանալով՝ համարեա թէ անարգել մտան Ուրարտի մեծ թագաւորութիւնը և բնիկներին մասամբ քշելով, մասամբ իրանց հետ ձուլելով բռնեցին նրանց տեղը:

Խալդեերի այդ վերջնական անկումը տեղի ունեցաւ Բրիտանից 700 տարի առաջ: Նորեկ ցեղերից մէկն էին և հայերը, որոնք վերջնականապէս աիրեւով հին Ուրարտին, անւանեցին Հայաստան:

Տ. Տ.-Գ.

ՎԱՃԱՌՈՒՈՒՄ ԵՆ

«ՇԱԽԻՂ» գրական - հասարակա-
կան ժողովածու՝ գինը 25 կ.

«ՇԱԽԻՂ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1—Խաչատուր Աբովեան
գինը 3 կ.

№ 2—Հայոց պատմութիւն
(նախապատմական շրջ-
ջան) գինը 3 կ.

Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

ձեռնարկ հայոց պատմութեան
չին դար՝ գինն է . 70 կ.
Միջին դար՝ գինն է 55 կ.
Ժողովրդական դպրոց՝ 20 կ.

Դիմել՝ Баку, книжный магазинъ
„Посредникъ“.

Շաբունակուում է բաժանորդագրութիւն 1914 թ.

„ՀՈՐԻԶՈՆ“

հասարակակ., գրական օրաթերթ
ՎԵՑԵՐՈՐԴ ՏՍՐԻ

Բաժանորդարձարն է 12 ամ. 8 ռ.,
11 ամ. 7—50, 10 ամ. 7 ռ., 9
ամ. 6—50, 8 ամ. 6 ռ., 7 ամ.
5—50, 6 ամ. 4—50, 5 ամ. 4 ռ.,
4 ամ. 3—20, 3 ամ. 2—40, 2
1—60, 1 ամ. 80 կ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ
ընդունում:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ. (կարելի է եւ մարկանքով եւ հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան անպատասխան:

„ՀՈՐԻԶՈՆ“-ի հասցէն—Тифлисъ, редакция „Горизонт“.

ԲԺՇԿԱՊԵՏ

Թ. Ն. Թարխանեան

կանանց հիշանդութիւն, վիրակապութիւն եւ մանկաբարձութիւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ օրւայ 12^{1/2}—
2 ժ. և երեկոյեան 5—7 ժ.: Կիւրակինը՝ օրւայ 10—2 ժ. և երեկոյեան 5—7 ժ.:

Հեռախօս 29—85.

Հայոց փող. Պարապետի անկիւն, Բարսեղեանի տուն (ճախկին Աղամբանի), հայոց եկեղեցու դիմաց:

„ВОСТОЧНАЯ ЛИРА“

Баку, уголь Колубакинской и Кривой
Рояли, Пианино, Муз. инстр., Ноты

Специальный настройщик роялей

ПРОКАТЬ и ПОЧИНКА.

„Պերվոէ

Տօվարիշչեստվօ“

ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱ-
ԳՈՒՍՏԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ,

Տօրգովի փողոց, № 26 „Րեմբանդ“ լու-
սանկարչատան կողմին:

**Տղամարդկանց, կանանց եւ երեխա-
ների պատրաստի հագուստներ:**

Խառնուք ունի իր սեփական դերձակա-
նոցը, ուր ընդունում են տղամարդկանց,
կանանց եւ աշակերտական ամեն ձևի
հագուստեղեմի պատրաստներ:

Ապրանքը սաացել ենք մենք ինքներս ան-
ձամբ առաջնակարգ գործարանատերերից:

Գները նշանակած շատ չափաւոր, որի
համար ինքզուրմ ենք յանախորդներին՝ ան-
ձամբ շնորհի բերել եւ համոզել:

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ

„ՐԻԺԱԿԻ

ԽԱՆՈՒԹ“

վաճառատուն

Ս. Լ. Մ.-ՎԱՐԳԵՊԵՏԵՆԻ և ԸՆԿ.

Բագու, Տօրգովի փողոց, Պաւլովի տուն
№ 20, հեռախօս № 24—13:

**Տղամարդկանց, երեխաների
պատրաստի հագուստներ,
նոյնպէս և կանանց վերնա-
զգեւորներ:**

**Ամեն-մի սեզօնի նորուքիւններ
մշտապէս սաացում են:**



Астраханскій

Получень большой выборъ
модныхъ манто.

ՊՍՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵԴԷՆԻ

„ԱՍՏՐԱՆԿԱՆՍԿԻ

ԽԱՆՈՒԹ”

ՊԵՏՐՈՍ ԲԱԲՈՅԵԱՆԻ

Բազու, անկիւն Կրասնովոդսկի եւ Տոր-
գուի փողոցներէ:

ՆՀԱՆԱԿԻԱԾ Է ՄԵԾ

ԷԺԱՆ ՎԱՃԱՌԲ

ամեն տեսակի տղամարդկանց,
կանանց և երեխաների պատ-
րաստի հագուստների

ԶԵՂԶ 20—40%0

Большой выборъ мужскихъ и дѣт-
скихъ костюмовъ.

Магазинъ



ЭЛЕКТРО-ТЕХНИЧЕСКАЯ
МАСТЕРСКАЯ

А. С. АРЗУМАНОВА

фирма существуетъ съ 1904 г.

Баку, Биржевая ул., домъ Адамова № 18,
телефонъ № 39—52. отдѣленіе по Стани-
славской, уг. Балаханской № 195.

ПРИНИМАЕТЪ НА СЕБЯ:

полное оборудованіе электриче-
скихъ станцій, электрическ. освѣ-
щенія, передачи силы, проводка
телефоновъ, звонковъ и разнаго
рода сигнализаций, а также годо-
вые абонировки

РЕМОНТЫ:

“Շ Ա Ի Ի Ղ”

ՅՈՂՂՈՎՐԳԱԿԱՆ ԱՐՄԱՆԳԻՐԸ

ունենալու է մեծապէս նեւեռեալ բաժինները: 1) Գրական-գեղարւեստական, (ինքնուրոյն եւ քաղցմանական) 2) Գրախօսական, 3) Պատմական, 4) Առողջապահական եւ 5) Հասարակական-հաղափարական: Բոլոր բաժինները բովանդակութեամբ եւ լեզուով մասշէլի պիտի լինեն բանութեան, գիտագիտութեան եւ աշակերտութեան: Գրախօսական բաժինը տալու է պարբերաբար հանրամասշէլի յօդւածներ ուսանայ եւ ամենամիջակա-նութեան ու մեքի ներկայացուցիչների մասին: Պատմական բաժինը առ այժմ պէ՛տ է՝ այլ հայոց պատմութեան կուլտուրական շրջանների տեսութիւնները: Առողջապահական բաժինը կը տա անհրաժեշտ եւ նորագոյն գիտելիքներ առողջապահութիւնից: Գրախօսական, պատմական եւ առողջապահական բաժինները պէ՛տ է արտասպէն ամսագրի ամեն-մի համարից փոքր դիւրով՝ 2—3 կող. արժեքով—տարածելու ժողովրդի, աշակերտութեան մէջ եւ բաժանորդներին տալու որպէս ձեռք յաւելումներ:

Ամսագրի տուաճիկ Ք-ը լոյս կը տեսնի յունիս ամսին: Լոյս է տեսել „Շաւիղ“ ժողովածուն, 64 էրես, գինը 25 կող.

54- 22029

Բացված է բաժանորդագրություն

«Շ Ա Ի Ի Ղ»

Ժողովրդական պատկերազարդ
ամսագրի: Բաժանորդները ստա-
նալու են տարեկան 12 դիրք,
ամեն-մեկը 72 երեսից և ամեն-մի
դրքի հետ 64 երեսից ձրի յաւել-
ւած փոքրիկ զրբոյկներ:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՈՒՄՆ Է՝

Բազւի համար . . . 3 ր.

Բազւից դուրս (Ռուսաս.) 4 ր.

Արտասահման . . . 4—50 կ.

Տարեկան բաժնեկիւնը կարելի
է վճարել 3 նւազ՝ ամեն-անգամին
1/3 մասը: Խնդրում է նիւթեր ու-
ղարկել՝ Баку, ул. Гоголя д. № 11.
Смогут Юзбашу. Բաժանորդագրու-
ւել կարելի է Բազւի «Գօսրեդ-
նիկ» զբաղաւանդոցում (հետ.
№ 6-95) և Ս. Իւզբաշի մօտ: Ման-
րամանուրիոցները միւս երեսին:

ԳԻՆՆ Է 3 Կ.

2651007M

2013

<< Ազգային գրադարան



NL0015972

